ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 31 » հուլիսի 2024 թվականի N: 331 - Ա ք. Գյումրի

ՄԱՐԻՆԵ ԱՄԻՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 610-Ա որոշումը, հիմք ընդունելով Մարինե Ամիրյանի 2024 թվականի հուլիսի 25-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Ամիրյանին տրամադրել 2023 թվականի տեղափոխված ամենամյա երկարացված արձակուրդից մնացած մասը՝ 7 աշխատանքային օր, և 2024 թվականի ամենամյա երկարացված արձակուրդից 13 աշխատանքային օր՝ 2024 թվականի օգոստոսի 1-ից 28-ը ներառյալ:

2. Մարինե Ամիրյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» տնօրենի

պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Անուշ Աղայանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՍԿԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ